ՆՐԻՄ․ Հ․ Ս․ — Մինչ մեր թշնամին ! . . 337
ՍԱՐԻՍԱՆ Հ․ Ս․ — Այլասերումն . . . 342
ԱԼԻՇԱՆ Հ․ Ղ․ Մ․ — Արշալոյս և Արեւելք լուսաւորութեան հայոց — Վերջ . . . 350
ՕՍՍԻԱՆ․ — Փինգալ․ թարգմ․ Հ․ ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . 355
H. F. B. LYNCH. — Տրապիզոն և Ախլցխա թարգմ․ ՍԱՐԻՍԱՆ Հ․ Ս․ . . . . . 362
ԹՈՎՄԷՍ ՃԻԱՊՈՉԱ․ — Ինչպէս Տիրինձրը․ թարգմ․ Հ․ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍԴԱՆՏԻՆԵԱՆ – Վերջ . 366
ՉՐԱՔԵԱՆ Հ․ Ք․ — Մկրտիչ Էմին . . . 372
Կարկտարգել Թնդանօթք . . . 377
ՀԻՒՊՇՄԱՆ․ — Armeniaca . . . 379
ՆՐԵՄ․ Հ․ Ս․ — Հանդէս Հանդիսից․ . 387

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

96․ Ն․ Վ․ թագաւոր Իտալիոյ Վիկ․ Էմմանուէլ Գ․ իբրեւ թագաւոր առաջին անգամ եկաւ Վենետիկ սեպտեմբեր 29ին․ Այցելեց պաշտօնական վայրերը և ազնուաթեան կարեւոր պաշտօնեաներէն զատ քաղքին բարձրաստիճան անձերէն միայն Ուխտիս Գեր․ Արքեպիս․ Աբբահայր Իգնատիոս Վ․ Կիւրեղեանին այցելութիւնն ընդունեցաւ և կէս ժամ ու հինգ վայրկեան համակրելի մեծարանօք և ընտանութեամբ խօսեցաւ մեր Վեհին հետ․ պատմեց Հայաստանի, Յունաստանի մէջ կատարած մի քանի անգամ ճանապարհորդութեան տպաւորութիւնները։

97․ Սեւանայ վանքին՝ վերջերս հնտեսեալ նուէրներն եղած են․ հանգուցեալ Սաղաման արկղապետ կտակած է 1000 րուբլի․ Վեհ․ Հայրիկը 700 րբլ․ Նոր Պայազիտցի վաճառական մը 500 րբլ․ Աղըստաֆցի վաճառական մը 420 րբլ․։

98․ Գեղագրութեան վերին աստիճանի գեղեցիկ նկարազարդ ձեռագիր Աւետարան մը գտնուեր է Պոլսոյ Ղալաթիոյ Ս․ Լուսաւորիչ եկեղեցւոյ գանձարանին մէջ․ գրուած ու նկարուած է 1223ին Մամեստիոյ վանքին մէջ ձեռամբ Յովհաննէս սարկաւագի։

99․ Ժամհարեան եղբայրները իբրեւ նուէր Պէրպէրեան վարժարանի յանձնաժողովին 500 ֆրանք յղեր են․ իսկ Գ․ Չիլինկիրեան 10 ոսկի։

100․ Երուսաղէմի Տ․ Յարութիւն Ս․ Պատրիարքը, Յոպպէի ճանապարհին վրայ գտնուած 3000 ոսկինոց կալուածը իր վանատան նուիրեր է։

101․ Գէորգ Միրզաբէկեանց, Ատրպատականի հայերուն արագատիպ մեքենայ մը նուիրեր է․ ուրեմն գրական գործիչներ և զատանք վարձատրողներ կը պակսին։ Անտարակոյս ամէն դժուարութիւն կը յաղթահարուի և Պարսկահայք ալ շուտով գրականական գործերու ձեռք կը զարնեն։

102․ Կ․ Պոլսոյ մէջ հանգուցեալ Բաւլի Սթէֆանովիչ յոյնը, մեր ազգային աղքատներուն 200 ոսկի կտակեր է։

103․ Վենետկոյ Մխիթարեանցս խնամոց ներքեւ կրթուած ուսանողներէն՝ Պ․ Յ․ Ունճեան, Բատուայի համալսարանին բազմաթիւ աշակերտաց մէջ իբրեւ ճարտարապետ, առաջին մրցանակի արժանացեր է․ կը շնորհաւորենք մեր եռանդուն և ժրաջան աշակերտը։ Այս առթիւ տեղացի թերթերը մեր հայ աշակերտաց ընդունակութեան մասին յատուկ յափշտակութեամբ մը կը խօսին։

104․ Պ․ Միհրան Յովհաննէսեան որ «Սփոփանք Ռամկին» և «Քնարիկ» անուամբ երկերով ծանօթ է ազգային ընթերցասիրաց, Միաբանութեանս յոբելեանին առթիւ մեզ նուիրեց մի նոր «Հայ դպրութեան քննական պատմութիւն» երկասիրութիւնը, զոր «Բանասէր»ի վերջին պրակին մէջ ամփոփած է։ Խմբագրութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ թէ հեղինակին և թէ «Բանասէր»ի խմբագրապետ Պ․ Կ․ Բասմաջեանին։

105․ Ծանօթ գրագէտ ու բանաստեղծ Պ․ Եղիա Տէմիրճիպաշեան, վտանգաւոր հիւանդութենէն ազատելով ելած է հիւանդանոցէն․ մեր խնդակցութիւնը կը յայտնենք վաստակաւոր գրասէրին։

106․ Գարակէօզեան կտակին 3000 ոսկիովը Սկիւտարի մէջ ազգային հիւանդանոցի որբանոցին շէնքն պիտի կառուցուի։

107․ Գեր․ Տէր․ Պօղոս կաթողիկոս Էմմանուէլեան, յատուկ կոնդակով մը Զմմառի վանքին մեծաւոր Անդրէաս Գերապայծառ Աղեքսանդրեանի Արքայութեան տիտղոսը տուեր է։

108․ «Լ'Արմէնի» թերթէն կ'իմանանք որ Պ․ Ալիսար Փարիզու Արհեստից վարժարանին մէջ փայլուն քննութիւն մը անցընելով, կ'արժանանայ ճարտարապետի տիպլոմին։ — Պ․ Լեւոն Սերվիչէն միեւնոյն քաղքին մէջ, իրաւագիտութեան քննութենէն շատ յաջող կ'անցնի։

109․ «Մշակ» լրագրէն կը քաղենք հետեւեալ մանր լուրերն։ Ն․ Նախիջեւանէն կը գրէ Գ․ Զալխուշեան․ «Պ․ Անդրէաս Տէր Մարուքեանը յանձնել է մեզ ժամանակին Գամառ-Քաթիպայի կիսարձանը, որը աջող է, ունի նմանութիւն և լաւ տպաւորութիւն է թողնում։ Մանուանդ գեղեցիկ է բանաստեղծի խորը հայեացքը, որը կարծես թափանցում է ձեր սրտի մէջ․ Կիսարձանը արայրից է։ Պատուանդանը

* Տար․ տես Հոկտեմբեր 1901։

պատրաստվում է Բոստով քաղաքում համաձայն Պ. Տէր-Մարուքեանի նկարին, խոսացի Մելցոնէի սրսւեստանոցում։ Սեւ տաշած հատաքարից սատիճաններ, սատիճանների վրայ երկու քարեր կարմիր լաբրադոր, չը տաշած, պարզարուած ծաղիկներով. վերեւը կխարձանը »։ Այս նկարագրէն կրնանք գուշակել որ անմահ բանաստեղծին նուիրուած մահարձանը շատ պարզ է. բանաստեղծին վայել էր բանաստեղծական մի գեղեցիկ կոթող։

# ՆԱՄԱԿԱՆԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ. — Վ. ԳԱՍՊԱՐԵԱՆ. — Հոկտեմբերի պրակին հետ արդէն իսկ ղրկուած է Ձեր ուզած միւս պրակն ալ։

ԹԻՖԼԻԶ. — Գ. Գ. — «Բազմավէպ»ի հասցէով Ձեր առ մեզ ուղղած «Տիֆլիսսկիյ-Լիստոկ» և «Նովոյէ-Օբոզրէնիէ» թերթերը չենք ընդունած։

ԹՐԻՊՈԼԻ. — ՍԵՒ ԾՈՎ. — Ս. Գըլըճեան. — Ընդունեցանք Ձեր նամակն, որուն բովանդակութեան համար շնորհակալ ենք. պրակներու առաքումը դեռ չենք դադրեցներ. միայն կը փութանք իմացնել որ՝ եթէ բաժանորդագինն ղրկած էք, մենք դեռ չենք ընդունած։

ՌՈՍՏՈՎ. — Պ. Յ. ՊԱԼԵԱՆ. — Յոբելեանիս համար ընդունեցինք 150 Ֆր. խնդրենք մեր շնորհակալութիւնը յայտնել առ Մեծ. Նուիրատուն Պ. Աղեքսանդր Թորոսեան։

ՓԱՐԻԶ. — «ԳՈՒԹԱՆ» — Ձեր անկեղծ և զգայուն գրութիւնը ծափահարութեամբ ընդունուեցաւ, շնորհակալութիւն։

Կ. ՊՈԼԻՍ. — Պ. Օ. Ո. — Քննեցինք Ձեր գործը, ընտիր է և խիստ շահեկան. թանգ է ամսագրիս սուղ՝ էջերուն համար, սակայն առանձին հրատարակուելու բոլորովին արժանի է։ Գալով միւս խնդրոյն, մտիկ ըրէք Տանդէին.

Diverse lingue, orribili favelle
Parole di dolore, accenti d'ira...

ուստի լաւագոյն է թաղել. այս առթիւ ընդունեցէք մեր շնորհակալութիւնը։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ՄԽԻԹԱՐԵԱՆ ՅՈԲԵԼԻՆԻ

### Ի ՎԵՆԵՏԻԿ

Ըստ փափաքանաց ազգային և օտարազգի շատ մը բարեկամաց, մամլոյ յանձնուած է մեր Յոբելինին հանդիսի յիշատակարանը, որ պիտի պարունակէ հանդիսին հակիրճ նկարագիրը, նոյն առթիւ եկած առենախօսութիւններ, հեռագիրներ, բարեմաղթական նամակներ և ուղերձներն. ինչպէս նաեւ եկեղեցական և պետական նշանաւոր հանդիսականաց նկարները և նուէրներու պատկերները։

# ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՈԳԻՆ Վահան Թէքէեան տպ. «Համալսարան»ի. Փարիզ 1901. Գինն ?

ՄԻ ԽՄԻՐ գրեց Բժկ. Վահան Արծրունի. տպ. Վրաց Հրատ. Ընկ. Թիֆլիս 1901. Գինն է 5 կոպէկ։

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԷԶԸ գրեց Անատոլ Ֆրանս թարգմ. Ա. Զ. Տպարան «Անահիտ» Փարիզ 1901. Գինն է 1 Ֆր.։

ՆՈՐ ԴՊՐՈՑ Ե. Պրակ. Հրատ. Ս. Դաւթեան Տպ. Նշան Կ. Պէրպէրեան Կ. Պոլիս 1901. Գինն է 5 Դահեկ.։

ՑԱՐԱՋԱԻՈՐ ՈՒՍԱՆՈՂԸ Ի. Պոտապենկօ. թարգմ. Գր. Աղաջանեանց. Թիֆլիս տպ. Տ. Մ. Ռոտինեանցի. 1901. Գինն է 15 կոպ.։

ԸՆԴԱՐՁԱԿ ԳՐԱՑՈՒՑԱԿ Պ. Պալեանց Գրատան. տպ. Յ. Մատթէոսեան Կ. Պոլիս 1901. Ձրի է։

ՅԱՑՏԱԳԻՐ Գրացուցակ Ս. Դաւթեան գործակալութեան։ տպ. Սարըեան Կ. Պոլիս 1901. Գինն է 2 ղրշ.։

ՏԵՂԵԿԱԳԻՐ (ուսումնական մասի) Թաւրիզի Լիլաւա թաղի «Հայկազեան» և «Թամարեան» երկսեռ դպրոցներու 1898-1901 տարի. տպ. Գաւրիժու Հայոց Արամեան դպրոցի. Ձրի ?

ՏԵՂԵԿԱԳԻՐ Թաւրիզի լսարանական ընկերութեան 1899-1900 և 1900-1901 տարեշրջաններ. 1901. տպ. Թաւրիզի Հայոց Արամեան դպրոցի. Ձրի ?

ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ հեռեւողութեամբ Nécնի Բ. Ընթերցարանին. Ա. տարի. մանկական հանրագիտութիւն ընթերցում և գիր, իրագիտութիւն բազմաթիւ պատկերներով — Ս. Գաբամաճեան. տպ. Յ. Մատթէոսեան Կ. Պոլիս 1901. Գինն ?

LA QUESTION ARMÉ.. Au point de vue de la paix universelle, par *H. Arakélian* Genève, Imprim. Romet, 26 Boulevard de Plainpais 1901. Գինն ?

LA TOXICITÉ des alcools chez les poissons par le *D.r P. Cololian* Paris 37 Bis, Rue de Ponthieu. 1901. Գինն ?

# † ՄԱՀԱԶԴ

**Թրքաց բեմի ամենէն արդիւնաւոր եւ նշանաւոր դերասաններէն մին՝ Թովմաս Ֆասուլեաճեան վախճաներ է անցեալ 18 սեպտեմբերին յԱւեքսանդրիա։**

**Յունիս ամսոյն մէջ վախճաներ է Ռուսաց կղերական երիտասարդ դաստիարակն՝ գրագէտ եւ աստուածաբան Աբրահ Տէր Միքայելեանց։ Ծն. 1864ին. Աւարտեր Գէորգ. Ճեմարանի եւ Ենայի Համալսարանի։**


digitised by A.R.A.R.@